

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1980

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄԵԾԱԳՈՅՆ ՄՈՆԹՐԷԱԼԻ



ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN HOLY APOSTOLIC CHURCH
OF GREATER MONTREAL

615 STUART AVE., OUTREMONT, P.Q. H2V 3H2
TEL.: 279-3066 — 279-6884

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ 1980-1981 ՏԱՐԵՇՐՋԱՆՆԵՐՈՒ

ՊՐՆ. ԺԻՐԱՅՐ ԱՅՎԱՏԵԱՆ
 ՏՈՔԹ.ՆՐԱՅՐ ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ
 ՊՐՆ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ԿԷՕՉԷՐԵԱՆ
 ՏՈՔԹ.ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱԼԱՊԱՆԵԱՆ
 ՊՐՆ. ՎԱՀԷ ԲԷԹԼԻ

ԹԵԿՆԱԾՈՒԽԵՐ 1981 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ

<u>ՄՍԵՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ</u> (Ընտրելի մէկ հոգի միայն)	<u>ԺՈՂՈՎԻ ԴԻՒԱՆԻ</u>	<u>ԱՏԵՆԱԴՊՐՈՒԹԵԱՆ</u> (Ընտրելի մէկ հոգի միայն)
ԳԱԼՈՒՄՏԵԱՆ ՕՆՆԻԿ ՖԱԶԼԵԱՆ ՊԵՐՃ		ԳԱԼՈՒՄՏԵԱՆ ԷՄՄԱ ՏԷՐ ՕՀԱՆՆԷՍԵԱՆ ՍՐԲՈՒՀԻ

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
(Ընտրելի 5 հոգի երկու տարուան շրջանի համար)

ՀԱՇՈՒԽԵՔՆՆԻՉ ՄԱՐՄՆԻ
(Ընտրելի 3 հոգի մէկ տարուան շրջանի համար)

ԱԼԵԲԵԱՆ ԴԱՐՕ
 ԱՅՎԱՏԵԱՆ ԺԻՐԱՅՐ
 ԱՐՍԷՎԷՐ ՌՈՒԲԷՆ
 ԳԱՐԻՊԵԱՆ ԱՇՈՏ
 ԹԱԴՈՍԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
 ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳԷՈՐԳ
 ՄԵԼԻՔԵԱՆ ԱՐԱՄ
 ՆԱԶԱՐԷԹԵԱՆ ՊԱՐԳԵՒ
 ՏԻԳՐԱՆԵԱՆ ԳՐԻԳՈՐ
 ՕՋՔԱՆԵԱՆ ՄՈՒՐԱՏ

ԱՐԱՊԵԱՆ ՎԱՀԱԳՆ
 ԱՐԹԻՆԵԱՆ ՅԱԿՈՐ
 ԲՐՈՒՏԵԱՆ ԻՎԱՆ
 ԷՍԷՆ ՊԵՐՃ
 ՉԱՏՐՃԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
 ԹՈՐԻԿԵԱՆ ՀՐԱՉ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Թեկնածուներու ցանկ	էջ 2
Հրաւեր եւ ժողովի օրակարգ	էջ 3
Սահմանադրական կանոններ	էջ 4
Հոգեւոր Հովիւի տեղեկատուութիւն	էջ 5-6
Ծխական խորհրդոյ տեղեկատուութիւն	էջ 7-10
Բուրաստան-ի տեղեկատուութիւն	էջ 10
Շաքաթօրեայ Վարժարանի տեղեկատուութիւն ..	էջ 11
Տիկնանց Միութեան տեղեկատուութիւն	էջ 12
Մամիկոնեան Մշակ.-ի տեղեկատուութիւն	էջ 14
Հաշուեքննիչ Մարմնի տեղեկատուութիւն	էջ 15
Ծխական խորհուրդոյ նիւթ. տեղեկատուութիւն	էջ 16-17
Ծխական խորհուրդոյ նախահաշիւ	էջ 18-19
Պարտքի Շիջման նիւթ. տեղեկատուութիւն....	էջ 20
Տիկնանց նիւթական տեղեկատուութիւն	էջ 21
Կոմիտաս Դպրաց նիւթ. տեղեկատուութիւն ...	էջ 22
Մամիկոնեան Մշակ. նիւթ. տեղեկատուութիւն .	էջ 23
Հաշուեյարդար	էջ 24

ՍՐԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻԶ ՄԱՅՐ ԳԱՂԱՐ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

Հ Ր Ա Խ Է Ր ՏԱՐԵԿԱՆ ԱՆՊԱՄԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւն ու ծխական Խորհուրդը, այսու կուգան Ձեզ նրաւիրել Տարեկան Անդամական Ընդհանուր Ժողովի, որ պիտի գումարուի

պիբւնի, 22 ՓԵՏՐՈՒՄ 1981, ԺԱՄԸ 15.00-ին
Եկեղեցւոյս մէջ

Իւրաքանչիւր տրատու անդամի պարտականութիւնն է ներկայ գտնուիլ սոյն կարեւոր Անդամական Ժողովին, որուն օրակարգի նիւթերն են հետեւեալները.

- 1.- Աղօթք եւ բացում
- 2.- Ընտրութիւն օրուան դիւանի
- 3.- Ընթերցում նախորդ Ընդհ. Ժողովի ատենադրութեան եւ վաւերացում
- 4.- Անդրադարձում նիւթա-բարոյական տեղեկատուութեանց եւ վաւերացում
- 5.- 1981 տարուան նախահաշիւի վաւերացում
- 6.- Վաւերացում Ընտրողական Յանձնախումբի կողմէ պատրաստուած թեկնածուներու անուններուն
- 7.- Ընտրութիւն ծխական Խորհուրդոյ 5 անդամներու
- 8.- Ընտրութիւն Հաշուեքննիչ Մարմնի 3 անդամներուն
- 9.- Թելադրութիւններ եւ զանազանք
- 10.- Փակման խօսք եւ օրհնութիւն

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ

պիբւնի, 1 ՄԱՐՏ 1981

ԺԱՄԸ 13.00 - 17.00ի ՄԻՋԵՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՐԻ ՄԱՆՈՒՆԵԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ

- 3.9. Կր խնդրուի իւրաքանչիւր անդամէն, ուսումնասիրել իրենց ղրկուած տեղեկատուութիւնը, որպէսզի ժամանակ չկորսուի ժողովի ընթացքին, անգամ մը եւս կարդալով:

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՊԱՄԱԿՑՈՒԹԵԱՆՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

- 307ՈՒԱԾ 5- ծխական ժողովը կը կազմուի բոլոր այն անձերէն՝ որոնք մկրտուած եւ դրոշմուած են Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ, կ'ընդունին անոր վարդապետութիւնը, կանոններն ու ծէսերը եւ կը կատարեն եկեղեցւոյ ու համայնքին վերաբերմամբ իրենց պարտականութիւնները: Այսպիսի անձինք կ'ըլլան ծխական եկեղեցւոյ եւ անոր ծխական ժողովին իրաւասու անդամները:
- » 6- ծուխի մը իւրաքանչիւր անդամ՝ 18 տարիքը լրացուցած, պարտաւոր է իր պատկանած եկեղեցւոյն վճարել տարեկան տուրք մը, որուն քանակը կ'որոշուի թեմական Պատգամաւորական ժողովին կողմէ, եւ որ կ'ընայ ծխական ժողովի կողմէ յաւելում կրել, սակայն չի կրնար նուազեցուիլ:
- » 7- ծխական եկեղեցւոյ մը 18 տարիքը լրացուցած իրաւասու անդամները իրաւունք ունին նոյն ծուխի ծխական ժողովներուն մասնակցելու եւ քուէ տալու, պայմանաւ, որ առ նուազն վեց ամիս անցած ըլլայ իրենց անդամակցութենէն ասդին եւ իրենց անդամատուրքերը վճարուած ըլլան: Կրրնան ընտրուիլ, իրենց անդամագրութենէն մէկ տարի ետք, եթէ 21 տարեկան եղած են:
- » 8- Այն անդամները՝ որոնք զանցառու գտնուած են վճարելու մէկ կամ աւելի տարուան անդամատուրքերը՝ նոյնին իսկ գործով կը կորսնցնեն ծխական ժողովներու մէջ քուէարկելու եւ ծուխէն ներս պաշտօնի ընտրուելու իրենց իրաւունքները: Նման անդամներ կրնան վերստանալ այս իրաւունքները, վճարելով իրենց գէթ վերջին երկու տարուան յետնեալ անդամատուրքերը:

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

- 307ՈՒԱԾ 16- ծխական ժողովի հրաւերը պէտք է դրկուի գրաւոր իւրաքանչիւր անդամի անհատապէս, ժողովի թուականէն առնուազն մէկ շաբաթ առաջ եւ պէտք է պարունակէ ժողովին օրակարգը: Ժողովին օրակարգը կը պատրաստուի Հովիւի եւ ծխական Խորհուրդի կողմէ: Օրակարգին վրայ կ'աւելցուին նոր հարցեր, ծխական ժողովի մեծամասնութեան քուէով:
- » 17- ծխական ժողովը օրինաւոր կը համարուի, քուէարկու անդամներու առնուազն մէկ-երրորդի կամ յիսուն անդամներու ներկայութեամբ, եւ որոշումներ կ'առնուին ներկայ եւ քուէարկու անդամներու մեծամասնութեամբ:
- » 22- Իւրաքանչիւր անդամ ունի միայն մէկ քուէի իրաւունք՝ որ փոխանցելի չէ, եւ անձամբ պէտք է տրուի: Քուէից հաւասարութեան պարագային, նախագահը կուտայ վճռական քուէն կամ կը թոյլատրէ երկրորդ քուէարկութիւն մը՝ նոյն հարցին մասին:

Սիրելի Անդամներ,

Աստուծոյ շնորհքով եւ ողորմութեամբ տարի մը եւս բոլորեցինք այս գաղութէն ներս, որպէս անդամներ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Մոնթրէալի, միշտ անսասան պահելով մեր հաւատքն ու նուիրումի ոգին, հանդէպ մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Անոր Գահակալին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, ինչպէս նաեւ մեր Թեմի բարեխնամ Առաջնորդին՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին, հետեւելով ու գործադրելով նորին Սրբազնութեան տուած բոլոր հրահանգները մեր Եկեղեցւոյ կանոնական, արարողական եւ վարչական բոլոր մարզերէն ներս: Կը մաղթենք եւ կ'աղօթենք, որ Աստուած իր ամենագոր Աջը մեր Եկեղեցիին ու անոր հաւատաւոր եւ բարեպաշտ անդամներուն վրայէն չհեռացնէ, պահելով իր Աստուածային հովանին մեր համայն հաւատացեալ ժողովուրդին, ըլլայ ի Սփիւռս աշխարհի եւ թէ Մայր հայրենիքին մէջ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.- Այս տարի եւս անխափան կատարուեցաւ եկեղեցական արարողութիւնները մեր երկսեռ երգչախումբին մասնակցութեամբ ամէն Կիրակի եւ տօնական յատուկ օրերուն օգնութեամբը պարտաճանաչ Սարկաւազներուն: Տ. Սահակ Ա. Քինյ. Պալեան մեկնեցաւ Սան ֆրանսիսքօ իր զակկին մօտ:

ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԾէՍԵՐ.- 1980 տարուան ընթացքին, կատարուեցան հետեւեալ խորհրդակատարութիւններն ու ծէսերը ամենայն կանոնաւորութեամբ.

- Մկրտութիւն եւ դրոշմ \ 44
- Ս. Պսակի արարողութիւն \ 26
- Թաղման կարգ \ 15

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅԾԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.- Մեր կարելիութեան սահմաններուն ներքեւ եւ մեզի եղած տեղեկութեանց համաձայն, հիւանդանոցներու, ծերանոցներու եւ բնակարաններու մէջ այցելեցինք հիւանդներու, տկարներու եւ տարեցներու, ջանալով մխիթարել իւրաքանչիւրը: Այս առթիւ, անգամ մը եւս կը յիշեցնենք, մեր համայնքի անդամներուն, որ եթէ կը փափաքին մեր այցելութիւնները որեւէ ձեւով, բարեհաճին տեղեակ պահել մեզ, դիմելով եկեղեցւոյս դիւանատունը:

ԱՅԾԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.- Այս տարուան ընթացքին, հաճոյքն ու պատիւը ունեցանք մեր համայնքէն ներս պաշտօնական այցը մեր Թեմին Բարեխնամ Առաջնորդին՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի, որ նախագահեց Այրիւեան Յուշահանդէսին եւ առ այդ պատարագեց մեր Ս. Եկեղեցւոյ մէջ: Ինչպէս նաեւ զանազան առիթներով ընդունեցինք այցելութիւնները մեր հոգեւոր եղբայրներուն յանձինս, Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի, Առաջնորդ Ամերիկայի Արեւմտեան Թեմին. Հոգշ. Տ. Յուսիկ Ժ. Վրդ. Պաղտասեանի, Հոգշ. Տ. Վազգէն Ժ. Վրդ. Քէշիշեանի, Հոգշ. Տ. Եղիշէ Ժ. Վրդ. Կիզիրեանի. Արժ. Տ. Տիրան Քինյ. Փափագեանի, Արժ. Տ. Բարթող Քինյ. Խրքածեանի եւ Արժ. Տ. Վարդան Քինյ. Ճանգուլեանի:

ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- Զանազինք միշտ կապ պահել մեր գրասենեակին միջոցաւ, կառավարական շրջանակներու հետ, ի մասնաւորի ներգաղթի նախարարութեան մօտ, ինչպէս նաեւ Օթաւայի կառավարութեան նոյնպէս ներգաղթի նախարարութեան մօտ, ապահովելու համար Գանատա մուտքի դիւրութիւններ մեր ժողովուրդին, որոնք առաւելաբար կը բնակին Թուրքիա, Լիբանան եւ Իրանի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- Զանազինք միշտ կապ հաստատել մեր Եկեղեցւոյ Մարմիններուն հետ, մօտէն հետաքրքրուելով անոնց գործունէութեանց, աջակից ըլլալով բոլոր ձեռնարկներուն, ըլլայ եկեղեցական ըլլայ ընկերային եւ ըլլայ զանազան մարզերէն ներս:

ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆՑ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ.— Այս տարի մասնաւոր ջանք թափեցինք Եկեղեցւոյ ընդհանուր կալուածին անհրաժեշտ նորոգութեանց եւ բարեգարդման նկատմամբ, որուն համար մասնաւոր հանգանակութիւն մը կազմակերպեցինք, որմէ գոյացաւ 12,000 տոլարի շուրջ գումար մը, որ ամբողջութեամբ յատկացուեցաւ կալուածի եւ անոր յարակից սենեակներու եւ սրահներու նորոգութեանց: Առանց մեր ժողովուրդին առատածեոն նուիրատուութեան կարելի պիտի չըլլար այս կենսական գործը կատարել, որուն համար կը մաղթեմ որ Աստուած տայ մեր բարեպաշտ ժողովուրդին մէկին տեղ վաթսուն եւ մէկին տեղ հարիւր:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ.— Մասնաւոր շնորհակալութեան խօսք ունինք բոլոր անոնց, որոնք անվերապահ ոգիով օգնեցին մեր Եկեղեցիին, ըլլան անոնք մեր ծխական խորհուրդի անդամներ եւ կամ մեր մարմիններուն եւ յանձնախումբերուն մէջ աշխատողներ, իրենց խորհուրդներով եւ իրենց աշխատանքի մասնակցութեամբ: Շնորհակալութիւն նաեւ Եկեղեցւոյս ժրջան դիւանապետ Պրն. Վահէ Զէթլիի, որ երկար տարիներու փորձառութիւններով, Եկեղեցւոյս գրասենեակային, մամուլի, ընկերային օժանդակութեանց եւ այլ սպասարկութիւնները կը տանի ամենայն կատարելիութեամբ եւ բժականորօրէն:

ԹԵԼԱՊՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Յետ այսու կը թելադրենք մեր պատուական ժողովուրդին, որ որեւէ պարագային, Եկեղեցւոյս անդամակցութեան համար, հաճին դիմել անձամբ Եկեղեցւոյ գրասենեակը, առիթ ընծայելով Հոգեւոր Հովիւին, մօտէն ծանօթանալու անհատներուն, եւ դրութիւնը ընծայել հարցուփորձերու Եկեղեցւոյ ծխական ու կանոնական կարգ մը պարագաներու շուրջ:

ԵԶՐԱԿԱՏՈՒԹԻՒՆ.— Կը հայցենք Տիրոջմէ, որ Եկեղեցւոյս իւրաքանչիւր անդամին պարզեւէ արեւշատութիւն եւ բարգաւաճութիւն ի փառս Աստուծոյ Եկեղեցիին եւ Հայ ազգին: Կ'աղօթենք որ Տէրը իր երկնաւոր շնորհքը առաւել եւս բաշխէ մեր ժողովուրդին, գիտակցութեան եւ նուիրումի ծամբայէն ներս, մասնաւոր Եկեղեցւոյս նկատմամբ, զօրավիգ կանգնելով անոր յառաջդիմութեան ու պայծառութեան:

Մամբ սիրով աղօթարար
 ՊԱՐԷՏ ՎՐԴ. ԵՐԷՑԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԺՌԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
1 9 8 0 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

1980-ի Ընդհանուր Անդամական Ժողովէն ընտրուած չորս անդամներու մասնակցութեամբ, ծխական խորհուրդը իր անդրանիկ նիստը գումարեց 26 Մարտ 1980-ին, նախագահութեամբ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի եւ ընտրեց իր դիւանը ըստ հետեւեալին.

- ՊՐՆ. ԱՐԹՕ ՊԱՄՄԱՃԵԱՆ` Ատենապետ
- ՏՈՔԹ. ՊԵՐՃ ԱՐԹԻՆԵԱՆ` Փոխ-ատենապետ
- ՊՐՆ. ՎԱՀԷ ԶԵՐԷՍԹԵՃԵԱՆ` Ատենադպիր
- ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ` Գանձապահ
- ՏՈՔԹ. ԱՐԹՕ ՏԷՄԻՐՃԵԱՆ` Խորհրդական
- ՏՈՔԹ. ՅԱԿՈՒԲ ԳԱՐԱԿԷՕՁԵԱՆ` Խորհրդական
- ՏՈՔԹ. ՅԱԿՈՒԲ ԽԱԶԻԿԵԱՆ` Խորհրդական
- ՊՐՆ. ՅԱԿՈՒԲ ԶԷՍԹԷՔԵԱՆ` Խորհրդական
- ՊՐՆ. ԴԱՐՕ ԱԼԷԲԵԱՆ` Խորհրդական

Պրն. Դարօ Ալէքեան, որ 1979-ի ընտրութեանց առաջին պահեստի անդամն էր, տեղը կ'անցնէր Պրն. Միսաք Կուտսուզեանի, որ հրաժարած էր ծխական խորհուրդոյ անդամակցութենէ՝ 23 Յունուար 1980-ին: Անդրանիկ նիստի յաջորդ օր, 27 Մարտ 1980-ին, ծխական խորհուրդէ հրաժարեցաւ Տոքթ. Պերժ Արթինեան, եւ իր տեղը զրաւեց, պահեստի անդամ Պրն. Ժիրայր Կազէրեան: Ժողովը ընտրեց Տոքթ. Յ. Գարակէօզեանը որպէս Փոխ-ատենապետ: 16 Յուլիս 1980-ին, իր հրաժարականը ներկայացուց Պրն. Վահէ Զերէսթէճեան, որ սակայն, ծխական խորհուրդոյ անդամներու խնդրանքին ընդառաջելով, վերադարձաւ իր պաշտօնին՝ Հոկտեմբեր 22, 1980-ին: Պրն. Ժիրայր Կազէրեան ներկայացուց իր հրաժարականը 22 Հոկտեմբեր 1980-ին, եւ անոր տեղ հրաւիրուեցաւ երկրորդ պահեստի անդամ Տիկ. Արտա Գուլյումեան, որ մերժեց հրաւերը ու այս կերպով խորհուրդս շարունակեց իր աշխատանքները ութ անդամներով:

26 Մարտ 1980-էն մինչեւ 31 Դեկտեմբեր 1980, ծխական խորհուրդը Հոգեւոր Հովիւի նախագահութեամբ գումարեց 24 ներթական նիստեր:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆՔ.- Ծխական խորհուրդը իրեն ենթակայ զանազան մարմիններուն հետ շարունակեց իր սերտ յարաբերութիւնները, հետաքրքրուելով իրենց գործունէութիւններով, եւ կարելի սահմաններուն մէջ օգնելով պահանջը ու անհրաժեշտ կարիքներուն: Եկեղեցին, այս տարի եւս, չունեցաւ իր Երիտասարդաց Մարմինը, եւ ՀԵՆԿԱ-ն վերակազմելու աշխատանքները այս շրջանին եւս մնացին դժբախտաբար ասյարդիւն:

Ծխական խորհուրդս, այս տարի եւս, փոխադարձ գործունէութեան ոգին մշակեց համայնքիս զանազան կազմակերպութիւններուն հետ, ինչպէս՝ Հ.Բ.Ը.Մ-, Պոլսահայ Միութիւն, Թէքէեան Մշակ. Միութիւն, Արմէն-Քէպէք Ալեք Մանուկեան Վարժարան եւ ԽԱԿ:

ԿԱԼՈՒԱԾԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ.- Ծխական խորհուրդս մասնաւոր կարեւորութեամբ զբաղեցաւ եկեղեցւոյ կալուածին անհրաժեշտ նորոգութիւններով: Այս նպատակաւ նշանակուեցաւ Մատակարար Մարմին մը, որուն մաս կազմեցին՝ Պ.Պ. Արա Օլթաճեան, Վահէ Ալթունեան եւ Խուրբէն Արսէվէր: Նկատի ունենալով անյետաձրգելի նորոգութեանց համար յատկացուելիք յաւելեալ գումարը, Եկեղեցւոյս ժրաջան հովիւ՝ Տ. Պարէտ Վրդ. Երէցեան, իր անձնական ջանքերով ձեռնարկեց հանգանակութեան արշաւի մը, որմէ գոյացաւ մօտ 11,000 տուարի շօշափելի գումար մը, որ ամբողջութեամբ տրամադրուեցաւ զանազան նորոգութեանց ու բարեգարդումի:

Ա.- ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ: Եկեղեցւոյ յարակից զանազան սենեակներն ու սրահները, ինչպէս՝ Թոսունեան դահլիճը, Գարիպեան սրահը եւ իր խոհանոցը, Վաչէ Յովսէփեան սրահը եւ իր խոհանոցը, Նրբանցքները, լուսարարներն ու այլ մասերը արդիական կերպով նորոգուեցան ու բարեզարդուեցան: Կարգ մը փոփոխութիւններու ենթարկուեցան եկեղեցւոյ հեռաձայնի գիծերը, սրահներու յարմար կերպով սարքաւորումներով, զանազան սրահներու ու դիւանատան միջեւ ստեղծուեցաւ հաղորդակցութեան միջոց: Այս դրութեամբ եկեղեցին ներկայիս ունի երկու հեռաձայնի թիւեր՝ 279-3066 եւ 279-6884: Մին զբաղած ըլլալու պարագային կարելի է միւսը գործածել:

Բ.- ՍՐԱՀՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ: Եկեղեցւոյ սրահները, այս տարի եւս, շարունակուեցան գործածուիլ թէ ազգային եւ թէ օտար կազմակերպութիւններու կամ անհատական ձեռնարկներու եւ ընդունելութիւններու համար, ըստ որոշեալ սակացոյցի մը:

ԴԻՒԱՆԱՊԵՏ ԵՒ ԳՐԱՍԵՆՆԱԿԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ.- Այս շրջանին եւս եկեղեցւոյ դիւանապետութեան պատասխանատու պաշտօնը կանոնաւորութեամբ ու ամենայն բժախնդրութեամբ տարաւ Պրն. Վահէ Քէթիկ, որուն շնորհիւ եկեղեցւոյս գրասենեակը միշտ բաց մնաց, դիմողներու զանազան խնդրանքներուն զոհացում տալով:

ԺԱՄԿՈՉ ԵՒ ՀՈԳԱՏԱՐ.- 1980-ի ընթացքին, շէնքի հսկողութեան եւ մաքրութեան աշխատանքները կատարուեցան՝ Պրն. Պօղոս Տէմիրճեանի եւ իր տիկնոջ ձեռամբ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.- Ապրիլի 19 եւ 20 օրերուն, Մոնթրէալ ժամանեց Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, որ նախագահեց Ապրիլ 19-ին Եղեռնի Յուշահանդէսին ու Պատարագեց Կիրակի Ապրիլ 20-ին, որմէ յետոյ ճաշկերոյթ մը սարքուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր ի պատիւ:

Կիրակի, Ապրիլ 27-ին, Կիւլայէնկեան Հիմնարկի պատասխանատուներէն Պրն. Վահրամ Մավեան այցելեց եկեղեցի եւ հանդիպում ունեցաւ ծխական Խորհուրդոյ կարգ մը անդամներուն հետ:

Յունիսի ընթացքին, եկեղեցի այցելեց, քաղաքս հիւրաբար գտնուող, Պոլսոյ Մարմարա օրաթերթի խմբագրապետ եւ ծանօթ մտաւորական Պրն. Ռոպէր Հատտէճեան, որ ունեցաւ մտերմիկ տեսակցութիւն մը Հոգեւոր Հովիւին եւ Դիւանապետին հետ:

Երբեմնի Գանատայի ժրջան Առաջ. Փոխանորդ եւ այժմու Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Օգոստոս 22-ին ժամանեց Մոնթրէալ եւ անմիջապէս այցելելով եկեղեցի մօտէն հետաքրքրուեցաւ տարուած աշխատանքներով: Սրբազան Հայրը ներկայ եղաւ Կիրակի Օգոստոս 24-ի Ս. Պատարագին եւ նախագահեց այդ օրերուն կատարուած երկու խորհրդակատարութեանց:

Կիրակի, նոյեմբեր 9-ին, յետ միջօրէի, Քէպէքի Լիպէրալ Կուսակցութեան պետ Պրն. Գլօտ Բայրն եւ մասնակի ընտրութեանց շրջանիս թեկնածու Պրն. Փիէռ Ֆորթիէ եկեղեցի այցելելով հանդիպում մը ունեցան Հոգեւոր Հովիւին, Պատգամաւորներուն, ծխական Խորհուրդոյ անդամներուն եւ այլ ազգայիններու հետ:

Կիրակի, Դեկտեմբեր 7-ին, Ս. Պատարագ մատոյց քաղաքս հիւրաբար գտնուող Պոլսոյ հոգեւորականաց դասէն՝ Արժ. Տ. Բարթող Բինյ. Խրքածեան: Նոյն օրը եկեղեցի այցելեց նաեւ սփիւռքահայ ծանօթ մտաւորական եւ հրապարակախօս Պրն. Անդրանիկ Անդրէասեան, որոնք հիւրասիրուեցան Հոգեւոր Հովիւին ու ծխական Խորհուրդոյ անդամներուն կողմէ:

2ԱՌՆԱՐԿՆԵՐ.-

Ա. ՏԷՊԻՈՒԱՆԹՆԵՐՈՒ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ.- Եկեղեցւոյս գլխաւոր ձեռնարկը՝ Տէպիւթանթներու պարահանդէսը այս տարի եւս, տեղի ունեցաւ Եաբաթ, նոյեմբեր 8-ին, Շաթօ Շամփլէյնի շքեղ պարասրահին մէջ: Կազմակերպիչ Յանձնախումբը, որուն կը գլխաւորէր ծխական խորհուրդը իր ատենապետին՝ Պրն. Արթօ Պասմաճեանի առաջնորդութեամբ, ձեռնարկեց լուրջ աշխատանքի եւ առանց որեւէ ջանք խնայելու տարաւ աշխատանքները: Այս առիթով ծխական խորհուրդս պարտք կը զգայ մասնաւոր շնորհակալութիւն յայտնել Յանձնախումբի մասնակցող անդամներուն եւ յատկապէս Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի, որ իր տարած անզնահատելի աշխատանքով, կարեւոր դեր ունեցաւ այս տարուան ձեռնարկին յաջողութեան մէջ:

Բ. ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԱՀԱՆԴԵՍ.- Ապրիլ 24-ի Եղեռնի յիշատակը, այս տարի եւս, նշուեցաւ Եաբաթ, Ապրիլ 19-ին Եկեղեցւոյս մէջ, կազմակերպուած յատուկ ու պատշաճ յայտագիրով մը: Սոյն Յուշահանդէսին կը նախագահէր Թեմիս Բարեխընամ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան: Ապրիլ 24-ի վերամուտին, կատարուեցաւ տպաւորիչ մոմավառ թափօր, եւ գործադրուեցաւ յայտագիր: Երեք տարիներ առաջ, Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի գեղեցիկ գաղափարով սկսած այս կէս գիշերուան արարողութիւնը անգամ մը եւս արձանագրեց մեծ յաջողութիւն մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին, սարկաւազներ, Դպրաց Դասու անդամներ, Տիկնանց Միութիւնը, ինչպէս նաեւ ինծ բազմութիւն մը:

Գ. ԶԱՏԿՈՒԱՆ ՀԱՌԿԻԹՆԵՐ.- Զատկուան աւանդական գունաւոր հաւկիթներու եւ տուրմերու կողովիկները, այս տարի եւս, պատրաստուեցան Եկեղեցասէր Տիկնանց Միութեան օժանդակութեամբ: Այս ձեռնարկի իրականացման համար ժրջանօրէն գործող Տիկնանցի անդամներուն եւ թէ պատրաստութեան եւ թէ վաճառումի աշխատութիւններուն իրենց անձնուէր մասնակցութիւնը չզլացող ազգայիններուն, ծխ. խորհուրդը կը յայտնէ իր խորին շնորհակալութիւնները:

Դ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԱՐԵԿԱՐԶ.- Ծխական խորհուրդս որոշած էր Եկեղեցւոյ Օծման 10-րդ տարեդարձը տօնել պատշաճ շուքով Կիրակի, նոյեմբեր 30-ին ու այս նպատակաւ հրաւիրած էր Թեմիս Առաջնորդ Սրբազան Հայրը: Սակայն, Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան ստիպողաբար Մայր Հայրենիք մեկնած ըլլալով, չկարողացաւ նոյն թուականին Մոնթրէալ գտնուիլ, որով խորհուրդս յետ խորհրդակցութեան, որոշեց զայն տօնել Կիրակի, Դեկտեմբեր 14-ին, միասնաբար կոմիտաս Դպրաց Դասու հիմնարկութեան 22-րդ տարեդարձին հետ: Մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագէ եւ յատուկ հոգեհանգստեան պաշտօնէ վերջ, զոյգ տարեդարձներուն առթիւ սարքուեցաւ սիրոյ սեղան, Մ.րի Մանուկեան Սրահին մէջ: Ծխական խորհուրդս, սակայն, նկատի ունենալով 10-րդ տարեդարձի կարեւորութիւնը, որոշած է տօնակատարութիւնները շարունակել 1981 տարուան ընթացքին:

Ե. ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ.- Եկեղեցւոյս Պատգամաւորները եւ ծխական խորհուրդոյ Ատենապետը, գլխաւորութեամբ Հոգեւոր Հովիւին, մասնակցեցան Ուաշինկթըն Տի.Սի.-ի մէջ Մայիս 29-31 թուականներուն կայացած Թեմիս Տարեկան Պատգամաւորական Ժողովին, բերելով իրենց դրական բաժինը ժողովի գործունէութեանց:

Վերջացնելէ առաջ, ծխ. խորհուրդս իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ իր նախագահին՝ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանին, որ միշտ անձնուէրաբար եւ մեծ նուիրումով սերտ գործակցութիւն մշակեց խորհուրդոյս հետ, դիւբացնելով իր աշխատանքները: Ենորհակալութիւն ծխ. խորհուրդոյ նախկին անդամներէն՝ Պրն. Միսաք կուսուղեանի, որ հակառակ հրաժարած ըլլալուն, սիրայօժար կերպով շարունակեց հաշուակալական հարցերուն հսկողութեան եւ տարեկան տեղեկատուութեանց պատրաստութեան մէջ:

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
 " ԲՈՒՐԱՍՏԱՆ " Ի ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ
 1 9 8 0 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Անցնող տարուան ընթացքին, լոյս ընծայուեցաւ վեց թիւ: Դժբախտաբար, աշխատակիցներու պակասին եւ գործնական դժուարութիւններու պատճառաւ կարելի չեղաւ յետզեցւոյս ամսաթերթը աւելի կանոնաւոր եւ աւելի յաճախակի հրատարակել:

Քանի մը ամիս առաջ, "Բուրաստան" ի Յանձնախումբը վերակազմուեցաւ. անոր մաս կը կազմեն՝ Տոքթ. Յարութիւն Արզումանեան, Վահէ Բէթլի, Օննիկ Գալուստեան, Գրիգոր Գրլմեան եւ Սուքիաս Գումրուեան:

Թերթին ամբողջական մեքենագրութիւնը կատարեց Պրն. Վահէ Բէթլի, օգտագործելով արդիական դարձատիպ դրութիւնը, որ այս տարի եւս, ինչպէս անցեալին, սիրայօժար կերպով տրամադրուեցաւ "Ապագայ" Շաբաթաթերթին կողմէ: Այս միջոցաւ կարելի եղաւ պատկերազարդ եւ ճոխ պարունակութիւն ունենալ:

Յանձնախումբս ջանաց "Բուրաստան" ը պահել իր առաքելութեան մէջ, որպէս կապը եկեղեցւոյ եւ իր անդամներուն միջեւ: Լայն տեղ տրամադրուեցաւ համայնքային լուրերու, յետզեցւոյ եւ իր զանազան մարմիններուն գործունէութիւններուն եւ մեր եկեղեցական ձէսերու բացատրութիւններուն:

Ենորհակալութիւն բոլոր աշխատակիցներուն եւ օժանդակողներուն:

"ԲՈՒՐԱՍՏԱՆ" Ի
 ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԺԱՎԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ Շար. -4-

Ենորհակալութիւն նաեւ մեր շրջանաւարտ անդամներուն, որոնք իրենց կարելին ի գործ դրին եւ իրենց մասնակցութեամբ բերին, որպէս ծխական խորհուրդոյ անդամներ, յետզեցւոյս մատակարարման աշխատութիւններ :

Վերջապէս, մասնաւոր շնորհակալութեան խօսք բոլոր այն կազմակերպութիւն եւ ազգայիններուն, որոնք իրենց անձնուէր գործակցութեամբ, թիկունք կանգնեցան խորհուրդոյս ու օգտակար հանդիսացան անոր զանազան աշխատանքներուն մէջ:

ԱՐԹՕ ՊԱՍՄԱՃԵԱՆ
 Ատենապետ
 ՎԱՀԷ ԲԵՐԷՍԹԵՃԵԱՆ
 Ատենադպիր

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ՇԱՐՔԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ
1 9 8 0 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Շաբաթօրեայ հայ վարժարանի ուսուցման 1980-81 տարեշրջանը սկսաւ 13 Սեպտեմբեր 1980 Շաբաթ օր, առաւօտեան ժամը 10.30-ին, Արմէն-Քէպէք ՀԲԸՄ Ալեք Մանուկեան Վարժարանին մէջ: Ներկայ էին զաղուծիս Հոգեւոր Հովիւը, Վարժարանի Խնամակալ Մարմնի անդամները, Վարժարանի Տեսուչը, Ուսուցչական Կազմը, ինչպէս նաեւ ծնողներ. բացուեց կատարուեցաւ կրօնական պատշաճ արարողութեամբ: Ներկայիս, Խնամակալ Մարմինը, որ կը հոգայ վարժարանի բոլոր կարիքները, կը բաղկանայ հետեւեալներէ.

- ՏԻԿ. ԷԼՏԱ ԱԶԲԻՊՐԻԹԵԱՆ Վտենապետ
- ՏՈՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷՍԷԿԻԻԼԵԱՆ Փոխ-ատենապետ
- ՏԻԿ. ԱՐԱՔՍԻ ԱՋՆԱԻՈՒՐ Վտենաղպիր
- ՊՐՆ. ՎԱՀԷ ՔԷՔԷՐԹԵՃԵԱՆ Գանձապահ
- ՏԻԿ. ԱՐՇԱԼՈՅՍ ՄԷՆԷՆՏԵԱՆ Խորհրդական

Շաբաթօրեայ Վարժարանը 1980-81 դպրոցական տարեշրջանին կը հաշուէ վաթսուն աշակերտ, եւ դասաւանդութիւնները տեղի կ'ունենան Ալեք Մանուկեան Ամենօրեայ Վարժարանի արդիական շէնքին մէջ: Աշակերտութեան երթեւեկը կ'ապահովուի Ալեք Մանուկեան Վարժարանի փոխադրական միջոցներով: Շաբաթօրեայ Վարժարանի Խնամակալութիւնը Ալեք Մանուկեան Վարժարանին կը վճարէ որոշ վարձք՝ սրահներու եւ օթոպիւսներու գործածութեան փոխարէն:

Վարժարանի Ուսուցչական Կազմը հետեւեալն է.

- ՊՐՆ. ՕՆՆԻԿ ԳԱԼՈՒՄՏԵԱՆ Տեսուչ
- ՏԻԿ. ՀԻԼՏԱ ԿԵՐԿԵՐԵԱՆ Ա. դասարան
- ՊՐՆ. ՏԻԳՐԱՆ ԱԽԱԳԵԱՆ Բ. դասարան
- ՕՐ. ՆԻՆԱ ԾԵՐՈՒՆԵԱՆ Գ. դասարան
- ՏԻԿ. ԵՆՈՐՀԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ Դ. դասարան
- ՊՐՆ. ԼՈՐԻՍ ՄԻՆՆԷԹԵԱՆ Զ. դասարան
- ՕՐ. ԱՆԻ ԷՍԷԿԻԻԼԵԱՆ Է. դասարան
- ՏԻԿ. ԱՆԱՀԻՏ ԶԱԳԸՃԵԱՆ Ը. դասարան
- ՕՐ. ՆՈՐԱ ԵԱԳՈՒՊԵԱՆ Պարուսոյց

Շաբաթօրեայ Վարժարանի եօթը կարգերուն մէջ կը դասաւանդուին հայերէն լեզու, գրականութիւն, Ազգային Պատմութիւն, կրօնք, պար եւ երաժշտութիւն: Եկեղեցւոյս Հովիւը, վարժարանի Տեսուչը եւ Ուսուցչական Կազմը ամբողջական նուիրումով կը զբաղին հայ պատանիին հոգեւոր ու ազգային դաստիարակութեամբ:

Սեպտեմբեր 1980-էն սկսեալ, ծխական Խորհուրդոյ հաւանութեամբ, Խնամակալութիւնս ստանձնած է Վարժարանի նիւթական հարցերու ամբողջական պատասխանատուութիւնը, եւ յաջորդ տարիէն սկսեալ իր տարեկան տեղեկատուութեան հետ պիտի ներկայացնէ նաեւ նիւթական հաշուետուութիւնը:

ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ.- Փետրուար 16, 1980-ին, տեղի ունեցաւ Վարժարանի Խնամակալութեան սարքած ղիմակաւոր պարանցիկ երեկոյթը, որ արձանագրեց աննախընթաց յաջողութիւն մը: 1981-ի ղիմակաւոր պարանցիկի կազմակերպիչ Յանձնախումբը, Պրն. Գէորգ Փելթեքեանի ատենապետութեամբ, արդէն իսկ Հոկտեմբերէն ի վեր լծուած է Փետրուար 28-ին տեղի ունենալիք ձեռնարկի պատրաստութեան: Ս. Զատիկի ծրագալոյցին, վարժարանի աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն, որմէ ետք Մարի Մանուկեան սրահին մէջ չէօրէկի եւ կաթի սեղաններու շուրջ բոլորուելով, աշակերտութիւնը ունեցաւ համելի կէսօր մը կազմակերպուած հաւկթախողով: Շաբաթօրեայ Վարժարանի աշակերտութիւնը իր մասնակցութիւնը բերաւ Ս. Ծննդեան եւ Ս. Զատիկի ծրագալոյցի արարողութեանց, կարդալով ընթերցուածներ եւ մասնակցելով Ս. Պատարագի երգեցողութեանց: Ինչպէս նաեւ Ս. Վարդանանցի Տօնին առիթով, աշակերտութեան մասնակցութեամբ եւ Հոգեւոր Հովիւի ձեռամբ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ կրօնական արարողութիւն: Յունիս 14, Շաբաթ օր, Եկեղեցւոյ Մարի Մանուկեան սրահին մէջ տեղի ունեցաւ տարեվերջի հանդէսը, որուն ներկայ էին ծխական Խորհուրդոյ անդամներ, գանազան կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ ծնողներ: Հանդէսի

**ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
1 9 8 0 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ**

Եկեղեցւոյս Տիկնանց Միուլթիւնը իր Տարեկան Ընդհանուր ժողովը գումարեց 22 Մարտ 1980-ին եւ նորրոնտիր վարչութիւնը իր դիւանը կազմեց 29 Մարտին հետեւեալ անդամներով.

- | | |
|---------------------------|-----------------|
| Տիւ. ՀԱՅԿՈՒՀԻ ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ | ՝ Ատենապետ |
| Տիւ. ՇՈՒՇԱՆ ԲՐՈՒՏԵԱՆ | ՝ Փոխ-ատենապետ |
| Տիւ. ԲԵՔԵԿԱ ԹԱՇՃԵԱՆ | ՝ Ատենադպիր |
| Տիւ. ԱՆԱՀԻՏ ԷՎՐԷՆՍԷԼ | ՝ Փոխ-ատենադպիր |
| Տիւ. ԳՈՀԱՐ ՏԷՐ ԳԷՈՐԳԵԱՆ | ՝ Գանձապահ |
| ՕՐ. ԱԼԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ | ՝ Փոխ-գանձապահ |
| Տիւ. ԲՈՋԱ ՏԻԳՐԱՆԵԱՆ | ՝ Խորհրդական |
| Տիւ. ԱՍՏԴԻԿ ՍՐՄԱՔԷՇԵԱՆ | ՝ Խորհրդական |
| Տիւ. ՎԵՐՈՆԻՔ ԺԻՀԱՆԵԱՆ | ՝ Խորհրդական |
| Տիւ. ՀԱՅԿԱՆՈՅՇ ԿԷՐԻՔԵԱՆ | ՝ Խորհրդական |

Տիկնանց Միուլթիւնս իր բոլոր կարելի միջոցներով ջանաց օգտակար ԸԼԼԼԸ Եկեղեցւոյս, հետեւեալ աշխատանքները իրագործելով.

ՃԱՇԿԵՐՈՅԹՆԵՐ.— Ս. Ջատկուան մեր ճաշին յաջորդեցին Ապրիլ 20-ին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի ի պատիւ կատարուած ընդունելութիւնը, Ապրիլեան Եղեռնի տօնակատարութեան կատարուած սուրճի եւ կարկանդակներու պատրաստութիւնը, Մայրերու Օրուան նուիրուած ճաշկերոյթն ու տօնակատարութիւնը, Ս. Խաչի տօնին նուիրուած ճաշկերոյթը, որուն հասոյթը ամբողջութեամբ նուիրուեցաւ շինութեան հիմնադրամին եւ վերջապէս Եկեղեցւոյս Օծման 10-րդ եւ Դպրաց Դասուս հիմնարկութեան 22-րդ տարեդարձներուն Միուլթիւնս պատրաստեց ճաշերը ամենայն հաւատարմութեամբ:

ՊՏՈՅՏՆԵՐ.— Այս շրջանին եւս ստոյտները կազմակերպուեցան "Շուկրո Փարթի" ի առիթով, որուն յաջորդեցին ամուսն եղանակին կատարուած զբօսապտոյտները դէպի՝ Էսթերէլ եւ Մակօբ:

ՀԱԽԱՔՈՅԹՆԵՐ.— Վարչութիւնս ջանաց կապր միշտ պահել մեր անդամուհիներուն միջեւ եւ զանազան առիթներով սարքեց թէյասեղաններ եւ ճաշկերոյթներ, ստեղծելու համար ջերմ մթնոլորտ մը:

ՋԱՏԿՈՒԱՆ ՀԱԽԻԹՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.— Նախորդ տարիներու նման, այս տարի եւս, պատրաստուեցան գունաւոր հաւկիթներու գեղեցիկ կողովիկներ, աւանդական չէօրէկն ու հայկական բակլաւան, որոնք ինչպէս նախորդ տարիներուն շուտով սպառեցան ապահովելով կոկիկ գումարներ: Ջատկուան այս աշխատանքներուն մեր անդամուհիներու, ինչպէս նաեւ բարեսէր տիկիններու զործակցութիւնը անգնահատելի է: Մանաւանդ Պրն. Միսաք Կուտսուզեանի աջակցութեան, որուն շնորհիւ այս տարի եւս կարելի եղաւ հաւկիթներու կողովիկները պատրաստել իր ժամանակին:

Այս բոլորին յաջորդեց Միութեանս աւանդական տօնավաճառը որ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 6-7 շաբաթավերջին: Ուտեստեղէններու պատրաստութիւնը յատկապէս, յաղթանակի բաժինն էր մեր այս գլխաւոր ձեռնարկին: Ձեռային աշխատանքներու եւ ասեղնագործութիւններու մի քան տեսակներ պատրաստուեցան մեր ազնիւ անդամուհիներուն եւ այլ անձերու կողմէ, շնորհիւ Վարչութեան տրնաջան եւ յարատեւ աշխատանքներուն տարեկան այս մեծ ձեռնարկը անգամ մը եւս պսակուեցաւ բացառիկ յաջողութեամբ Միութեանս ապահովելով աւելի քան 4000 տուարի գումար շահ մը:

ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ Եար. -2-

Ողի յայտագրի վերջաւորութեան, կատարուեցաւ վկայականներու բաշխում: Շրջանաւարտներու յաջողագոյն աշակերտաց, ինչպէս նաեւ ուսուցչաց բաշխուեցան նուէրներ խնամակալութեան կողմէ: Սեպտեմբեր 27-ին, Շարաթ օր, խնամակալ Մարմինը թէյասեղանի մը շուրջ հրաւիրեց վարժարանի հին ու նոր շրջանաւարտները ու անոնց ծնողները: Այս մտերմիկ ընդունելութեան ընթացքին, ի միջի այլոց, բացատրուեցան նաեւ խնամակալ Մարմնի ուսումնական ծրագիրները, եւ ներկաներէն խնդրուեցաւ, որ իրենց ամէն տեսակի օժանդակութիւնը բերեն ծրագիրներու իրականացման ու վարժարանի յաջող կերպով գոյատեւման համար:

Նոյեմբեր-Դեկտեմբեր ամիսներու ընթացքին, խնամակալութիւնը, առաջին անգամ ըլլալով, իրականացուց շօքօլաններու վաճառման ձեռնարկը, որ շնորհիւ աշակերտներու, ուսուցիչներու եւ բազմաթիւ ազգայիններու, արձանագրեց յաջողութիւն, ապահովելով միանգամայն նիւթական որոշ գումար մը: Նոյեմբեր 29-ին, Առաջնորդարանի նրթական Տեսուչ՝ Օր. Սիլվա Տէր Ստեփանեան վարժարան այցելելով, անձամբ ներկայ եղաւ դասաւանդութեանց, եւ մի քանի թելադրական հանդիպումներ ունեցաւ Դպրոցի Տեսուչին, ուսուցչական Կազմին եւ խնամակալ Մարմնին հետ: Դեկտեմբեր 20-ին, տեղի ունեցաւ աշակերտներու յատուկ տօնածառի հանդիսութիւն, վարժարանի նէօնճեան Սրահին մէջ: Ներկայ էին Հոգեւոր Հովիւր, խնամակալ Մարմնի անդամներն ու ծնողներ: Հանդիսութեան ընթացքին գործադրուեցաւ կոկիկ յայտագիր մը, բաղկացած երգերէ, պարերէ ու արտասանութիւններէ: Հանդէսի վերջաւորութեան աշակերտութեան բաշխուեցաւ զանազան նուէրներ:

ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄԻՆ
ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ

Տիկնանց Միութեան վարչութիւնս այս շրջանին արձանագրած յաջողութիւններուն աւրնթեր, կ, ուզէ յայտնել իր անկեղծ շնորհակալութիւնները բոլոր անդամուհիներուն անխտիր, ինչպէս նաեւ համակիրներուն, որոնք ամէն առիթով թիկունք կանգնեցան իրենց աշխատանքներով եւ զօրավիգ եղան իրենց անգնահատելի մասնակցութիւններով:

Շնորհակալութեան բաժին մը եւս, գաղութիս Հոգեւոր Հովիւ Հոգ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանին, որ մօտիկ հետաքրքրութիւն եւ հոգածութիւն ցոյց տուաւ մեր աշխատանքներու իրագործման մէջ:

Տիկնանց Միութիւնս միշտ աշխատած է եւ կը շարունակէ աշխատիլ պայծառ պահելու մեր Ս. Եկեղեցին, ի փառս մեր պատուական ազգին:

ՀԱՅԿՈՒՀԻ ԿՈՒՏՍՈՒԹԵԱՆ
Ատենապետ
ԲԵՐԵԿԱ ԹԱՇԾԵԱՆ
Ատենաղպիր

Դպրաց Դասու Կարչուլթիւնս, այս շրջանին, ամբողջացուց նախորդ Կարչուլթեան սկսած յատուկ սրահի մը կահաւորման աշխատանքները, որուն շնորհիւ Դպրաց Դասը այսօր ունի ներկայանալի դահլիճ մը, որ կը ծառայէ թէ ժողովներու, թէ փորձերու եւ թէ Կանգնեցնելու եւ գոյքերու պահպանման:

Դպրաց Դասը այս անցնող տարուան ընթացքին, շնորհիւ Տիկ. Մ. Զաւզաւաթեանի եւ Պրն. Ա. Միւհէնտիսեանի, ամէն Երեքշաբթի երեկոները անխափան կերպով կատարեց իր փորձերը, առանց նկատի ունենալու տաքն ու ցուրտը:

Այս շրջանին, կարելի եղաւ բարեգարդել Եկեղեցւոյս վերնատունը, ուրկէ կը կատարուին երգեցողութիւնները:

Այս շրջանին, Դպրաց Դասուս բոլոր գործունէութիւնները կարելի եղաւ իրագործել, շնորհիւ մեր անդամներու ջանքերուն, զոհողութեանց ոգիին, ցոյց տուած պատրաստակամութեան, անդամները հաւաքելու եւ ինքնաշարժերով զանոնք փորձերու եւ երգեցողութեան բերելու սպասարկութենէն սկսեալ մինչեւ ամենավերջին մանրամասնութիւններուն մէջ: Ի հարկէ, այս բոլորը կարելի եղաւ գլուխ հանել մեր բարեպաշտ ժողովուրդին բարոյական եւ նիւթական անսակարկ բաշակերանքով:

Կոմիտաս Դպրաց Դաս Երգչախումբս, ներկայիս կը պատրաստուի Մայիս ամսուան ընթացքին սարքելու աշխարհիկ եւ կրօնական երգերու համերգ մը:

Կարչուլթիւնս այս առթիւ պարտք կը զգայ իր խորին շնորհակալութիւնները յայտնել Հոգ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանին, որ առանց բացառութեան ներկայ եղաւ եւ նախագահեց մեր ժողովներուն եւ իր ցուցմունքներով Կանգնեցնելու մեծ ուժ մը կարենալ գլուխ հանելու մեզի սահմանուած պարտականութիւնները:

Շնորհակալութիւններ մեր սարկաւազաց դասու պարտաճանաչ ներկայացուցիչներուն, որոնք եկան դիւրացնել մեր պարտականութիւնը:

Մասնաւոր շնորհակալութիւններ յատկապէս մեր ժրաջան ու անձնուէր վարիչ Տիկ. Մ. Զաւզաւաթեանի եւ Պրն. Ա. Միւհէնտիսեանի, որոնք թէ ղեկավարելով եւ թէ նուագելով Կանգնեցնելու Կանգնեցնելու մեր երգչախումբին: Առանց անոնց, կարելի պիտի չըլլար իրագործել այս տարուան յաջողութիւնները:

Վերջապէս շնորհակալութիւններ երգչախումբիս իւրաքանչիւր անդամին, որոնք կանոնաւոր կերպով Կանգնեցնելու փորձերու եւ երգեցողութեանց ու ջանացին վառ պահել Եկեղեցւոյս փառքն ու պատիւը:

Դպրաց Դասուս յառաջիկայի ծրագիրներուն մաս կը կազմէ նաեւ Եկեղեցւոյ Խորանի կամարի շուրջը զետեղել ասացուածք մը, լրացրնելով կարելորդ պակաս մը:

ԳԵՈՐԳ ՓԵԼՔԷՔԵԱՆ
Ատենապետ
ՍՈՒՔԵԱՍ ԳՈՒՄՐՈՒՅԱՆ
Ատենադպիր

Կոմիտաս Դպրաց Դասու ներկայ վարչութիւնը որ ընտրուեցաւ Մարտ 5-ին կայացած Ընդհանուր Անդամական ժողովի ընթացքին, իր անդրանիկ նիստը զուարեւելով 9 Մարտ 1980-ին, կազմեց իր ղիւանը ըստ հետեւեալին.

ԳԷՈՐԳ ՓԵՂԵՔԵԱՆ	՝ Ատենապետ
ՍՈՒՔԻԱՍ ԳՈՒՄՐՈՒԾԵԱՆ	՝ Ատենադպիր
ՕՆՆԻԿ ՍՐԿ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ	՝ Գանձապահ
ՄՈՒՐԱՏ ՕԶՔԱՆԵԱՆ	՝ Խորհրդական
ԱՇՈՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ	՝ Խորհրդական

Այս շրջանին, Վարչութեանս անյետաձգելի մտասելեռումը եղաւ կազմութիւնը երկսեռ երգչախումբի մը: Ենորհիւ Եկեղեցւոյս Հոգեւոր Հովիւին, Վարչութեանս ջանքերուն, կարելի եղաւ ապահովել ներկայութիւնը Տիկին Մարգրիտ Զաւաւաթճեանի որպէս երգչախումբի վարիչ իրեն օգնական ունենալով Պրն. Արթօ Միւհէնտիսեանը:

Տիկ. Մ. Զաւաւաթճեանի անփոխարինելի ներկայութիւնը, սարտականութեանց հանդէպ ունեցած բացառիկ բժախնդրութիւնը կարելի դարձուց ունենալ աւելի քան երեսուն հոգիներէ բաղկացած երկսեռ երգչախումբ մը, որ ամէն Կիրակի, ինչպէս նաեւ տօնական յատուկ օրերու, անխափան կերպով կր կատարէ երգեցողութիւնները դաշն կերպով, լաւ տպաւորութիւն թողելով մեր հաւատացեալ ժողովուրդին վրայ:

Վարչութեանս անդամներէն եւ Եկեղեցւոյս սարկաւազաց դասու ժրջան անդամներէն Բարշ. Օննիկ Սրկ. Գալուստեան քաղաքիս Արմէն-Քէպէք եւ Շաքաթօրեայ վարժարանիս աշակերտութիւնը բժախնդրօրէն մարգելով, յաջողեցաւ պատրաստել պատանեկան երգչախումբ մը, որ Ս. ծննդեան ճրագալոյցի Ս. Պատարագին իր մասնակցութեամբ խորապէս տպաւորեց ըլլոր ներկաները: Ս. Զատկուան առթիւ եւս պատանեկան երգչախումբը բերաւ իր մասնակցութիւնը:

Այս տարի եւս, Յունուար ամսուան ընթացքին, Դպրաց Դասըս, Մասնակցութեամբ Հոգեւոր Հովիւին եւ սարկաւազներու, բերաւ իր մասնակցութիւնը, այլեւս աւանդութիւն մը դարձած, Ութրոմոն շրջանի Զրիստոնեայ Եկեղեցիներու կողմէ կազմակերպուած միացեալ սաշտամունքին:

Ասրիլեան Եղեռնի Յուշատօնին առթիւ, ինչպէս նախանցեալ տարիներուն, Դպրաց Դասըս իր գործօն մասնակցութիւնը բերաւ այս առթիւ կազմակերպուած եկեղեցական հանդիսութեանց, ի ներկայութեան թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր:

Շաքաթ, Դեկտեմբեր 6-ին, քաղաքիս ՀԲԸՄ-ի Մասնաճիւղին կազմակերպած Հայաստանի 60-ամեակին նուիրուած տօնակատարութեան յայտագրին իր մասնակցութիւնը բերաւ աշխարհիկ երգերով:

Կիրակի, Դեկտեմբեր 14-ին, Եկեղեցւոյս Օծման 10-րդ եւ Դասուս հիմնարկութեան 22-րդ զոյգ տարեդարձները տեղի ունեցան բացառիկ շուքով եկեղեցական եւ աշխարհիկ հանդիսութիւններով, որուն ընթացքին Երկսեռ երգչախումբս աշխարհիկ երգերու փունջով մը եկաւ ծոխացնել օրուան յայտագիրը: Այդ օր, մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագի աւարտին, կատարուեցաւ հոգեհանգստեան յատուկ սաշտօն, Դասէս անդարձ բաժնուած անդամներու համար:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԲՈՒՄԲԻ

1980 ՏԱՐԵՇՐԱՄԱՆ

1980 տարին Յանձնախումբիս համար հանդիսացաւ շատ յատկանշական տարի մը, տրուած ըլլալով որ այս տարուան մէջ ան տօնեց իր գոյութեան քսանամեակը:

Արդարեւ 1978 տարուան ընթացքին, Մամիկոնեան Մշակութային Յանձնախումբին վեթերան ու ներկայ անդամներուն թելադրութեամբն ու գործակրցութեամբը արդէն սկսած էին այս հանդիսութեան պատրաստութիւնները. պատրաստութիւններ՝ որոնք հինգ-վեց ամիսներու բազմակողմանի, բծախնդիր ու կազմակերպեալ աշխատանքի կարօտեցան: Հանդիսութիւնը տեղի ունեցաւ 16 մարտ 1980 թուականին, Մանուկեան սրահին մէջ, ի ներկայութեան աւելի քան 300 հանդիսականներու: Օրուան յայտագիրը ամփոփումն էր Յանձնախումբիս 20-ամեայ գործունէութեանց, այսինքն 20 տարիներու ընթացքին իրագործուած բազմաթիւ ու բազմատեսակ ձեռնարկներուն մէկ խճանկարը, որ ներկայացուեցաւ գեղարուեստական որակով: Այս առթիւ հրատարակուեցաւ պատմական յուշեր ու նկարներ պարունակող մատեան մը, մեկենասութեամբը Յանձնախումբիս հիմնադիր անդամներէն Պրն. Յ. Էէսթէքեանի:

Այս հանդիսութեան առթիւ Յանձնախումբս ստանձնեց բարեգարգել Մանուկեան սրահին բեմը, այնտեղ գետեղելով իորքի նոր վարագոյրներ:

Այս տարուան Ապրիլեան յուշատօնը տեղի ունեցաւ Եկեղեցւոյս մէջ, ի ներկայութեան Առաջնորդ Սրբազան Հօր: Յանձնախումբս ստանձնած էր յայտագրին գեղարուեստական բաժինը, որ կը բաղկանար գլխաւորաբար երաժրշտական, բանաստեղծական եւ լուսապատկերային համադրութենէ մը, ինչ որ կատարուեցաւ խիստ տպաւորիչ կերպով:

Նկատի ունենալով Եկեղեցւոյս մօտալուտ տասնամեակը, Յանձնախումբս գրաւոր կերպով հաղորդեց ծխական Խորհուրդին իր պատրաստակամութիւնը՝ մշակութային գետնի վրայ աջակցելու համար այս տարեդարձին առթիւ կազմակերպուելիք հանդիսութեանց:

19 Հոկտեմբեր 1980-ին տեղի ունեցաւ գեղարուեստական երեկոյթ, նուիրուած հայրենի յայտնի նկարիչ Մարտիրոս Սարեանի ծննդեան 100-ամեակին: Օրուան դասախօսներն էին Մակիլ Համալսարանի արուեստից պատմութեան դասախօս Փրոֆ. Պերթոս եւ Մոնրէալահայ ծանօթ նկարիչ Արման Թադոսեան: Այս առթիւ Յանձնախումբս գեղեցիկ ու գործնական զաղափարը ունեցած էր Սարեանի կարգ մը գործերէն լուսանկարչական վերարտադրութեամբ ցուցահանդէս մը պատրաստելու:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս Յանձնախումբս զարկ տուաւ հայագիտական գիրքերու վաճառումին, մեր ժողովուրդին մէջ ընթերցասիրութիւնը խթանելու միակ նպատակաւ: Արդարեւ գոհունակութեամբ կ'արձանագրենք թէ այս աշխատանքը արդիւնաւէտ կ'ըլլայ եւ հայ գիրին ու գիրքին հանդէպ պահանջքը հետզհետէ կ'աճի: Դեկտեմբերի 6 եւ 7 օրերուն Յանձնախումբս մասնակցեցաւ Եկեղեցւոյ Տիկնանց տարեկան պագարին, գիրքերու, ձայնապրնակներու եւ քարտերու իր իւրայատուկ անկիւնով:

Ի դիմաց Մամիկոնեան Մշակութային Յանձնախումբի,

Ն. Ուզունեան՝ Ատենապետ, Ա. Արթինեան՝ Ատենադպիր

ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
 ՀԱՇՈՒՇՔԵՆՈՉ ՄԱՐՄՆԻ
 1 9 8 0 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

Մանրակրկիթ կերպով քննեցինք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի մուտքի եւ ելքի, ինչպէս նաեւ հաշուեկշիռի ցուցակները 1 Յունուար 1980-էն 31 Դեկտեմբեր 1980 շրջանի համար:

Մեր քննութիւնները եղան ընդհանրապէս ընտրուած հաշուեքննական մակարդակի վրայ, եւ պարփակեցին հաշուական տոմարներու եւ փաստաթուղթերու վաւերական ձեւի ճշդման, զորս հարկ տեսանք զանազան պայմաններու տակ:

Ըստ մեր կարծիքին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդի ցոյց տուած մուտքի եւ ելքի հերթական տեղեկատուութիւնները ճշգրիտ կերպով կը ներկայացնեն իր 1980 տարեշրջանի գործունէութիւնը եւ իր վիճակը 31 Դեկտեմբեր 1980 տարուան, նախորդ տարիներու որդեգրած հաշուակալական սկզբունքներու հիման վրայ:

Մասնագէտ հաշուակալներ՝

ԱՐԱՊԵԱՆ ՎԱՀԱԳՆ

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳԷՈՐԳ

ՉԱՏՐՃԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԾՏՈՒՈՒԹԻՒՆ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
1 9 8 0 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.80</u>	<u>31.12.79</u>
Եկեղեցւոյ մումսվառուութենէ եւ պնակէ	\$12,434	\$11,946
Եկեղեցւոյ կալուածէն վարձք	5,980	5,135
" Բուրաստան " ամսաթերթէ	2,704	3,235
Շաքաթօրեայ վարժարանէ	9,309	7,031
Խորհրդակատարութիւններէ	7,170	8,330
Անդամատուրքերէ	16,017	18,810
Նուիրատուութիւններէ	23,912	25,830
Իւղագին նուիրատուութիւններէ	6,834	6,025
Պարտքի Շիջման նուիրատուութիւններէ	346	878
Նորոգութեան ֆոնտի նուիրատուութիւններէ	9,450	---
Պատի օրացոյցէ	250	931
Դրամատան տոկոսէ	4,836	5,015
Գրասենեակի զանազան մուտքերէ	679	710
<u>ՁԵՌՆԱՐԿՆԵՐԷ</u>		
Շաքաթօրեայ դպրոցի պարանցիկէ	2,316	3,245
Ջատկուան հակիթներէ	1,751	1,989
Տէպիւթանթ. պարանցիկէ նախորդ տարուան	4,604	2,624
Տէպիւթանթ. պարահանդէսէ	10,675	9,531
Ջովացուցիչ մեքենայէ	---	205
<u>ՄԱՐՄԻՆՆԵՐԷ</u>		
Տիկնանց Միութենէ	8,800	9,000
Մամիկոնեան Մշակ. Յանձնախումբէ	500	300
Կոմիտաս Դպրաց Դասէ	3,000	1,000
Երիտասարդացէ	572	---
		121,830
Պուխոյ Պատրիարքարանի հաշւոյն	---	1,950
	<u>\$132,139</u>	<u>\$123,780</u>

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
1 9 8 0 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Ե Լ Ք</u>	<u>31.12.80</u>	<u>31.12.79</u>
Պաշտօնէութեան	\$34,311	\$27,840
<u>ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԱԽՍԵՐՈՒ</u>		
Հոգեւորականաց յատկացումներ	7,251	5,638
Ընթացիկ ծախսեր	6,962	3,904
Կալուածի պահպանութեան	22,082	18,943
Գլխաւոր նորոգութեանց	15,395	13,020
" Բուրաստան " ի	3,649	3,456
Շաքաթօրեայ վարժարանի	17,948	11,755
Գրասենեակի ծախսերու	6,161	6,684
Պատի օրացոյցի	---	1,149
Ապրիլեան Յուշահանդէսի	---	544
Ջանազան գործունէութեանց	---	580
Շիջման Յանձնախումբի փոխանցում	4,700	7,000
Առաջնորդարանի տուրք	31,386	21,200
	<u>\$149,845</u>	<u>\$121,713</u>
Պուլտոյ Պատրիարքարանի փոխանցում	---	11,475
	<u>\$149,845</u>	<u>\$133,188</u>
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	(17,706)	(9,408)
Պատրաստ գումար Յունուար 1-ին	56,776	66,184
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	39,070	56,776

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Ի
Ծ Խ Ա Կ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ Ո Յ
1 9 8 1 Տ Ա Ր Ե Շ Ր Հ Ա Ն Ի

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>1980</u> <u>Կ Ա Տ Ա Ր Ո Ւ Ա Ն Ծ</u>	<u>1981</u> <u>Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Ի</u>
Եկեղեցւոյ մոմավառողթենէ եւ պնակէ	\$12,434	\$14,000
Եկեղեցւոյ կալուծաէն վարձքէ	5,980	6,500
Բուրաստան ամսաթերթէ	2,704	3,500
Շաբաթօրեայ վարժարանէ	9,309	8,000
Խորհրդակատարող թիւններէ	7,170	9,000
Անդամատուրքերէ	16,017	16,000
Նուէրատուող թիւններէ	23,912	26,000
Իւղագին նուէրատուող թիւններէ	6,834	7,000
Պարտքի Շիջման նուէրատուող թիւններէ . . .	346	---
Նորոգութեան հիմնադրամի նուէրատ.	9,450	5,000
Պատի օրացոյցէ	250	---
Դրամատան տոկոսէ	4,836	5,000
Գրասենեակի զանազան մուտքերէ	679	700
ՁԵՆՆԱՐԿՆԵՐԷ		
Շաբաթօրեայի պարանցիկէ	2,316	4,000
Ջատկուան հաւկիթներէ	1,751	2,000
Տէպիւթանթ. պարահանդէս նախորդ տարուէնէ .	4,604	3,500
Տէպիւթանթներու պարահանդէսէ	10,675	10,000
Ջովացուցիչ մեքենայէ	---	200
ՄԱՐՄԻՆՆԵՐԷ		
Տիկնանց Միուլթենէ	8,800	9,000
Մամիկոնեան Մշակ. Յանձ.է	500	500
Դպրաց Դասէ	3,000	3,000
Երիտասարդացէ	572	---
10-ամեակի ձեռնարկներէ	---	4,600
	<u>\$132,139</u>	<u>\$137,500</u>

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Ի
 ԾԱԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ
 1 9 8 1 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Ե Լ Ք</u>	1980 <u>ԿԱՏԱՐՈՒԱԾ</u>	1981 <u>ՆԱԽԱՀԱՇԻԻ</u>
Պաշտօնէութեան	\$34,311	\$38,000
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԱԽՍԵՐՈՒ		
Հոգեւորականաց յատկացումներու	7,251	7,000
Ընթացիկ ծախսերու	6,962	7,000
Կալուածի պահպանութեան	22,082	22,000
Գլխաւոր նորոգութեանց	15,395	5,000
Բուրաստան ամսաթերթի	3,649	4,000
Շաբաթօրեայ վարժարանի	17,948	18,000
Գրասենեակի ծախսերու	6,161	6,000
Ջանազան գործունէութեանց	---	500
Շիջման Յանձնախումբի փոխանցում	4,700	---
Առաջնորդարանի տուրքի	31,386	30,000
	<u>\$149,845</u>	<u>\$137,500</u>
Ելքի առաւելութիւնն ի դէմ ելքի	(17,706)	---
Պատրաստ գումար Յունուար 1-ին	56,776	39,070
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	39,070	39,070

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԾՏՈՒՈՒԹԻՒՆ
ՊԱՐՏՔԻ ԵԻՋՄԱՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ
1 9 8 0 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.80</u>	<u>31.12.79</u>
"ԵՈՒՆԱՅԹՐՄ ՉՐՐՀ" տարեկան վարձքէ	\$4,000	\$4,000
Դրամատան տոկոսէ	4,889	4,481
Ժխական Խորհուրդէ	4,700	7,000
	<u>\$13,589</u>	<u>\$15,481</u>

<u>Ե Լ Ք</u>		
Կալուածի պարտամուրհակներու	12,500	12,500
Կալուածի պարտամուրհակի տոկոսի	1,828	2,641
Դրամատան ծախսերու	2	2
	<u>\$14,330</u>	<u>\$15,143</u>

Մուտքի առաւելութիւնն ի դէմ ելքի	---	338
Ելքի առաւելութիւնն ի դէմ մուտքի	741	---
Պատրաստ գումար Յունուար 1-ին	46,837	46,499
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	46,096	46,837

ՆՈՒՄԱԿԱՆ ՀԱՇՈՒՅՈՒՈՒԹԻՒՆ
ԵՎ ԴԵՑԱՍԷՐ ՏԻՎՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
1 9 8 0 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.80</u>	<u>31.12.79</u>
Անդամավճարներէ	405	505
Նուէրատուութիւններէ	465	245
Ճաշերէ եւ ուտեստեղէններէ	5,545	4,468
Տարեկան տօնավաճառէ	5,508	6,674
Վիճակահանութենէ	---	857
Ջրօսպտոյտներէ	1,498	2,477
Դրամատան տոկոսէ	24	64
Ջանազաններէ	275	101
	<u>\$13,720</u>	<u>\$15,391</u>
 <u>Ե Լ Ք</u>		
Ճաշերու եւ ուտեստեղէններու	2,493	1,946
Տարեկան տօնավաճառի	1,583	1,830
Վիճակահանութեան	---	40
Ջրօսպտոյտներու	1,174	1,612
Խոհանոցի պիտոյքներու	---	342
Ջանազանքի	631	640
Երուսաղէմի սանի	50	50
Ճիսկան Խորհուրդոյ փոխանցում	8,800	9,000
	<u>\$14,731</u>	<u>\$15,460</u>
 Եւրի առաւելութիւն ի դէմ մուտքի	(1,011)	(69)
Պատրաստ գումար Յունուար 1-ին	1,647	1,716
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	636	1,647

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԾՏՈՒՈՒԹԻՒՆ
ԿՈՄԻՏԱՍ ԴՊՐԱՑ ԴԱՍՈՒ
1 9 8 0 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.80</u>	<u>31.12.79</u>
Եկեղեցւոյ պանկէ	\$1,160	\$1,058
Նուիրատուութիւններէ	645	1,129
Տարեդարձներու տօնակատարութիւններէ	3,679	---
Տարեկան պարանցիկ երեկոյթէ	---	1,915
Նորածեւութեան ցուցահանդէսէ	---	143
Դրամատան տոկոսէ	85	14
	<u>\$5,569</u>	<u>\$4,259</u>
 <u>Ե Լ Ք</u>		
Տարեդարձներու տօնակատարութեանց	1,125	71
Եկեղեցւոյ բարեգարդման	1,599	2,320
Պատգամաւորներու	---	117
Ժաղկեփունջերու	---	345
Ջանազան ծախսերու	507	430
Ժխական Խորհուրդոյ փոխանցում	3,000	1,000
Երգեհոնահարի	200	450
	<u>\$6.431</u>	<u>\$4,733</u>
 Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	(862)	(474)
Պատրաստ գումար Յունուար 1-ին	2,708	3,182
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	1,846	2,708

ՆԻԻՔԱԿԱՆ ՀԱՇՈՒԾՏՈՒՈՒԹԻՒՆ
ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ
1 9 8 0 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

<u>Մ Ո Ւ Տ Ք</u>	<u>31.12.80</u>	<u>31.12.79</u>
Գիրքերու վաճառքէ	\$5,007	\$3,160
Ձայնապնակներու վաճառքէ	675	2,388
Նկարներու վաճառքէ	705	---
Նուիրատուութիւններէ	275	100
Դրամատան տոկոսէ	27	9
	<u>\$6,689</u>	<u>\$5,657</u>

Ե Լ Ք

Գիրքերու զնման	4,075	2,898
Ձայնապնակներու պատրաստութեան	---	1,893
Նկարներու պատրաստութեան	494	---
Շարժուն գրախանութի գրադարան	---	547
20-ամեակի հանդիսութեան ծախսերու	590	---
Բեմի խորքի վարագոյրներու	219	---
Տպագրութիւն եւ թղթատարութիւն	374	333
Ջանազանք	270	61
Ծխական խորհուրդոյ փոխանցում	500	300
	<u>\$6,522</u>	<u>\$6,032</u>

Մուտքի առաւելութիւն ի դէմ ելքի	167	
Ելքի առաւելութիւն ի դէմ մուտքի	---	375
Պատրաստ գումար Յունուար 1-ին	2,021	2,396
Պատրաստ գումար Դեկտեմբեր 31-ին	2,188	2,021

Ի ձեռին ունեցած գիրքերու եւ ձայնապնակներու մօտաւոր
արժէք

1,800

Հ Ա Շ Ո Ւ Ե Յ Ա Ր Դ Ա Ր
31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1 9 8 0

ԸՆԹԱՑԻՆ ԻՆՉՔ

ՊԱՏՐԱՍՏ ԳՈՒՄԱՐ

Պարտքի Շիջման Յանձնախուժմբի մօտ	\$46,096	
Տիկնանց Միուլթեան մօտ	636	
Կոմիտաս Դպրաց Դասի մօտ	1,846	
Մամիկոնեան Մշակ. Յանձ.ի մօտ	2,188	
Ժխական Խորհուրդոյ մօտ	39,070	\$89,836

ԿԱԼՈՒԱԾ ԵՈՒ ԻՆՉՔ (ԳՆՄԱՆ զԻՆՈՎ)

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի	250,000	
Յաւելուած Խորանի եւ զանազանք	22,463	

Եկեղեցւոյ պատկան ինքնաշարժ	6,037	
Պարանանդէսի զանձուելիք	3,500	282,000

ՊԱՐՏՔ ԵՈՒ ՋՈՒՏ ԱՐԺԷՔ

Եկեղեցւոյ կալուածին տարեկան	12,500	
Ընթացիկ պարտքեր	5,000	
Առաջնորդարանի	8,000	

ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐՏՔ

Եկեղեցւոյ վճարում	6,250	31,750
տոկոս		

ՋՈՒՏ ԱՐԺԷՔ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի	340,086	340,086
		\$371,836

